

Անահիտ Աբրահամյան
*Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության,
քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների
ամբիոնի հայցորդ*
Էլ. Հասցե՝ anahit.abrahamyan2023@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.2-21

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ներկայացված է արդար դատաքննության իրավունքի համապարփակ տեսական-իրավական վերլուծություն, որն առանձնանում է բազմակողմանի մեթոդաբանական մոտեցմամբ՝ համադրելով փիլիսոփայական, իրավատեսական և սահմանադրաիրավական վերլուծության եղանակները:

Աշխատությունը սկսվում է արդարության որպես փիլիսոփայական կատեգորիայի խորքային քննությունից՝ հետևելով դասական հունական մտածողությունից (Պլատոն, Արիստոտել) մինչև ժամանակակից տեսություններ (Ռոուլս, Դվորքին, Նոզիք): Հեղինակն առանձնացնում և վերլուծում է արդարության տարբեր տեսակները՝ բաշխողական, ուղղիչ, վրեժխնդրական, վերականգնողական և ընթացակարգային, ցույց տալով դրանց փոխկապակցվածությունը իրավական արդարադատության հետ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արդարատության և իրավական արդարության փոխհարաբերությանը, իրավունքի գերակայության սկզբունքին և մարդու արժանապատվությանը, որպես արդար դատաքննության փիլիսոփայական հիմքին: Ուսումնասիրվում են իրավունքի հիմնական տեսությունները՝ բնական իրավունք, իրավական պոզիտիվիզմ և մեկնաբանողական մոտեցում, և դրանց ազդեցություն-

նը արդար դատաքննության հայեցակարգի ձևավորման վրա:

Հոդվածում հիմնավորվում է արդար դատաքննության իրավունքի երկակի բնույթը՝ որպես սուբյեկտիվ իրավունք և օբյեկտիվ սահմանադրական կարգադրություն: Վերլուծվում են հակամրցակցային և քննիչ դատավարական մոդելները, դատական գործընթացի դերը՝ որպես հանրային դիսկուրս և պետական լեգիտիմության աղբյուր:

Քննադատական և ինտեգրատիվ դիտարկումների միջոցով ցույց է տրվում, որ արդար դատաքննության իրավունքը չի սահմանափակվում դատավարական տեխնիկական կանոններով, այլ արտացոլում է արդարության, իրավունքի գերակայության և մարդու արժանապատվության մասին բազմադարյա փիլիսոփայական և իրավական մտքի սինթեզը:

Ուսումնասիրության նորարարությունը կայանում է արդար դատաքննության հայեցակարգի համապարփակ վերլուծության մեջ՝ որպես իրավական փիլիսոփայության պատմական զարգացման արդյունք:

Հիմնաբառեր. Արդար դատաքննություն, արդարություն, արդարամտություն, իրավունքի գերակայություն, իրավունքի տեսություն, մարդու իրավունքներ, փիլիսոփայություն, դատական անկախություն:

Ներածություն

Արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարության և իրավունքի գերակայության հիմնասյուներից մեկն է: Այն չի սահմանափակվում միայն դատարան դիմելու կամ որոշակի դատավարական ընթացակարգերից օգտվելու նվազագույն հնարավորությամբ: Այն ներառում է իրավական տարբեր բաղադրիչների՝ անաչառ դատարանի, դատավարության ողջամիտ ժամկետի, հրապարակայնության, կողմերի հավասարության, իրավաբանական օգնության, հիմնավորված դատական ակտի և այլ երաշխիքների համապարփակ ամբողջություն, որոնք միասին են ստեղծում իրական արդարադատության նախապայմանները:

Արդար դատաքննության իրավունքի խորքային բովանդակությունը լիարժեք բացահայտելու համար այն չպետք է դիտարկվի միայն պոզիտիվ իրավունքի նորմատիվ ձևակերպումների շրջանակում: Սահմանադրական կամ միջազգային փաստաթղթերում ամրագրված դրույթները հանդիսանում են ավելի լայն ու երկարատև պատմա-փիլիսոփայական զարգացումների արդյունքը: Արդար դատաքննության հայեցակարգի ամբողջական ըմբռնումը պահանջում է արդարության, արդարամտության, իրավունքի գերակայության և մարդու արժանապատվության մասին գաղափարների համախմբված ուսումնասիրություն՝ սկսած հին աշխարհի փիլիսոփաներից մինչև արդի իրավաբաղադրական դոկտրիններ:

Ինչպես նշում է Ռոուլսը (1971), արդարությունը հանդիսանում է սոցիալական ինստիտուտների առաջին առաքինությունը, ինչպես որ ճշմարտությունը մտքի համակարգերի առաջին առաքինությունն է: Այս հիմնարար դիր-

քորոշումը, հատկապես կարևոր է դատական համակարգի համատեքստում, որտեղ արդարության իրացումը դառնում է պետության լեգիտիմության և հասարակական վստահության անմիջական չափանիշ:

Սույն ուսումնասիրության նպատակն է հիմնավոր կերպով վերլուծել արդար դատաքննության իրավունքի հայեցակարգը՝ կենտրոնանալով նախևառաջ արդարության տեսական-փիլիսոփայական հիմքերի վրա: Քննության առարկա կդառնան արդարության դասական ուսմունքները, արդարության տեսակների տարբերակումը և դրանց կապը իրավական արդարադատության հետ, արդարության և արդարամտության փոխհարաբերությունները, իրավունքի գերակայության գաղափարը, իրավունքի հիմնական տեսությունները և դրանց ազդեցությունն արդար դատաքննության գաղափարի վրա, ինչպես նաև մարդու արժանապատվության հայեցակարգը և արդար դատաքննության կարևորությունը հասարակության կայունության և պետական լեգիտիմության համատեքստում:

Մեթոդ (տեսական հիմքեր)

Սույն հոդվածը հիմնված է բազմամեթոդ տեսական հետազոտության վրա, որը համադրում է փիլիսոփայական, իրավատեսական և սահմանադրաիրավական վերլուծության եղանակները: Հիմնական մեթոդներն են պատմական-իրավական մեթոդը (արդարության հայեցակարգի էվոլյուցիայի հետազոտում հին աշխարհից մինչև ժամանակակից տեսություններ), համեմատական-իրավական մեթոդը (բնական իրավունքի, պոզիտիվիզմի և մեկնաբանողական մոտեցման համեմատություն), և սիստեմատիկ վերլուծության մեթոդը (արդարության տեսակների դասակարգում և փոխկապակցվածության ուսումնասիրություն): Կիրառվել են նաև դոկտրինալ վերլուծության և քննադատական մեթոդները՝ իրավական դոկտրինաների, փիլիսոփայական տեքստերի խորը մեկնաբանման և ավանդական մոտեցումների սահմանափակումների բացահայտման համար: Միջդիսցիպլինար մոտեցումը թույլ է տվել միավորել փիլիսոփայության, իրավունքի, սոցիոլոգիայի և քաղաքական գիտության տվյալները՝ ձևավորելով արդար դատաքննության իրավունքի համապարփակ և ինտեգրատիվ ըմբռնում: Արդյունքում ստեղծվել է տեսական-իրավական վերլուծություն, որը ցույց է տալիս արդար դատաքննության հայեցակարգի բազմաշերտ բնույթը՝ որպես փիլիսոփայական, իրավական և սահմանադրական-քաղաքակրթական ինստիտուտ:

Արդյունքներ

Արդարությունը որպես փիլիսոփայական կատեգորիա

Արդար դատաքննության իրավունքը հնարավոր չէ լիովին ըմբռնել առանց հասկանալու վերջինիս առանձին տարրերը, մասնավորապես՝ «արդարություն» տերմինը: Ժամանակակից աշխարհում, հատկապես իրավական գիտությունների ոլորտից դուրս, իրավունքը և օրենքը հաճախ նույնացվում են արդարության հետ, սակայն, հետագա ուսումնասիրությունից պարզ է

դառնում, որ այդ հասկացությունները միշտ չէ, որ համընկնում են:

Արդարությունը այն գերագույն նպատակն է, կատարելության այն դրսևորումը, որին և միտված են իրավունքի և օրենքի ողջ փիլիսոփայությունը, ինչպես նաև օրենսդրական և իրավական ոլորտի բոլոր նախաձեռնությունները: Այն հանգամանքը, որ հասարակության մտքում օրենքը հաճախ նույնացվում է արդարության ապահովման անհրաժեշտության հետ, հիմք է այն եզրահանգման համար, որ արդարությունը ունի արմատական փիլիսոփայական և նաև հոգեբանական նշանակություն մարդկության և անհատի կյանքում:

Փիլիսոփայության ոլորտում առանձնացվում են չորս հիմնական առաքինություններ՝ խոհեմություն (prudence), արդարություն (justice), տոկունություն (fortitude) և զսպվածություն (temperance): Դրանք համարվում են հիմնական, քանի որ բոլոր այլ առաքինությունները հիմնված են կամ բխում են դրանցից: Այս առաքինությունների կարևորությունը ձևավորվել է դեռևս հին աշխարհում և ժամանակի ընթացքում տեղ է գտել նաև քրիստոնեության մեջ:

Անգամ այն չորս առաքինությունների շարքում արդարությունը առանձնանում է հատուկ կարևորությամբ: Նշանակալի է, որ չորս առաքինություններից արդարությունը միակն է, որն ունի արտաքին ուղղվածություն: Այլ կերպ ասած, այն միտված է արտաքին աշխարհի և այլ անհատների շահերի պաշտպանությանը (Pope, 2002, էջ 272):

«Արդարություն» տերմինը (justice) իր արմատում պարունակում է լատիներեն *ius* տերմինը, որը նշանակում է «ձիշտ» (McBrien, 1994, էջ 943): Հարկ է շեշտել, որ այսպիսի կարևոր և բազմաշերտ տերմինը չի կարող ունենալ մեկ ընդհանրական նշանակություն: Տարբեր ժամանակաշրջաններում փիլիսոփաները տարբեր կերպ են մեկնաբանել այս տերմինը:

Դեռ հին հռոմեական իրավունքում արդարությունը սերտորեն կապված էր *sum cuique tribuere*՝ «յուրաքանչյուրին՝ իրենը» սկզբունքի հետ: Ուլպիանոսի համաձայն «*Iustitia est constans et perpetua voluntas ius sum cuique tribuendi*», այն է՝ «Արդարությունը մշտական և հավերժական կամք է՝ յուրաքանչյուրին տալու իրեն հասանելի բարիքը» (Justinian, 1985, 1.1.10.1): Այս մոտեցումը փաստացի ձևակերպում էր արդարության այն ըմբռնումը, ըստ որի արդարությունն առաջին հերթին համաչափություն է՝ արժանիքի, իրավունքների և պատասխանատվության օրգանական համապատասխանություն, այլ ոչ թե մաթեմատիկական հավասարություն:

Դասական մտածողության մեջ արդեն իսկ տեսանելի է արդարության երկակի բնույթը: Մի կողմից՝ այն բարոյական առաքինություն է, որը բնութագրում է անհատի վարքագիծը: Մյուս կողմից՝ արդարությունը սոցիալական կարգի սկզբունք է, որը ներթափանցում է ինստիտուտների կառուցվածքն ու գործառնությունը:

Հունական դասական փիլիսոփայության մեջ արդարության ընկալումը ստանում է ավելի խորքային տեսական հիմքեր: Պլատոնի «Պետություն» երկում արդարությունը դիտարկվում է թե՛ անհատական, թե՛ քաղաքական-սոցիալական հարթություններում (Plato, 1992, Book II, 357a–358b): Պլատոնի պատկերացմամբ արդար պետությունը այն պետությունն է, որտեղ հասա-

րակության տարբեր դասերը կատարում են իրենց բնորոշ գործառույթները՝ առանց փոխադարձ ոլորտ ոտնձգելու և իշխանության ոչ բնական կենտրոնացման: Այս մոդելը ուղղակիորեն զուգադրվում է մարդու հոգու կառուցվածքին՝ բանականության, կամային և ցանկությունների մասերի ներդաշնակության գաղափարին:

Արիստոտելն արդարության խնդիրը ևս ավելի մանրամասն է մշակում: «Նիկոմաքոսյան էթիկա» աշխատության V-րդ գրքում նա արդարությունը բնորոշում է որպես «լիարժեք առաքինություն», որը վերաբերում է մարդու հարաբերություններին այլոց հետ (Aristotle, 1999, Book V): Արիստոտելյան դասակարգումը թույլ է տալիս տարբերակել ընդհանուր արդարությունն ու մասնավոր արդարությունը: Ընդհանուր արդարությունը մոտ է արդի «օրենքի գերակայության» գաղափարին, քանի որ ենթադրում է քաղաքացիական առաքինությունների ամբողջություն և օրենքներին համապատասխան վարքագիծ հանուն հասարակական ընդհանուր բարիքի:

Մասնավոր արդարությունն արդեն վերաբերում է բարիքների բաշխմանն ու անհատների փոխհարաբերություններին և ներառվում է բաշխողական և ուղղիչ արդարության ձևերում: Բաշխողական արդարությունը սկսում է քննարկել այն հարցը, թե ինչպես պետք է բաշխվեն պաշտոնները, բարիքները կամ հարկային ծանրությունները տարբեր անձանց միջև, որպեսզի պահպանվի համաչափությունը: Ուղղիչ արդարությունը արդեն վերաբերում է վնասների, խախտումների, անհամաչափությունների վերացմանը՝ հատուցման, վերադարձի կամ այլ իրավական միջոցներով:

Արիստոտելի «միջինի» մասին ուսմունքը առանձնահատուկ ազդեցություն է ունեցել հատկապես քրեական քաղաքականության և դատական հայեցողության վերաբերյալ ժամանակակից մոտեցումների վրա (Aristotle, 1999, II.1106a-1109b): Արդարությունը, ըստ նրա կայանում է չափավորության մեջ: Այլ կերպ ասած, Արիստոտելի պատկերացմամբ արդարությունը ծայրահեղությունների միջև «միջին» կետն է: Այս պատկերացումը հետագայում ներթափանցեց պատժի անհատականացման, համաչափության և դատարանի հայեցողության սահմանների մասին դոկտրինայի մեջ և այսօր ուղղակի կապ ունի արդար դատաքննության տարրերի հետ:

Միջնադարում, մասնավորապես միջնադարյան Եվրոպայում արդարության հայեցակարգը դիտվում էր քրիստոնեական մտքի համատեքստում: Այս դարաշրջանում հատուկ կարևորության էին արժանանում բնական իրավունքի և աստվածային օրենքի հայեցակարգերը և արդարությունը, հետևաբար, դիտվում էր այս հասկացությունների համատեքստում: Թովմա Աքվինացու մոտ պատկերացումն այն է, որ աշխարհիկ օրենքը լեգիտիմ է այնքանով, որքանով այն արտացոլում է կամ առնվազն չի խախտում բնական և աստվածային օրենքի հիմնարար սկզբունքները (Aquinas, 1947, I-II, Q. 95, Art. 2):

Աքվինացին ասում է, որ անարդար օրենքը իրականում օրենք չէ («lex iniusta non est lex»), քանի որ այն շեղվում է բնական օրենքից և արդարությունից (Aquinas, 1947, I-II, Q. 96, Art. 4): Հետագայում այս միտքը կծառայի որպես իրավունքի և բարոյականության փոխհարաբերության վերաբերյալ

վեճերում բնական իրավունքի դոկտրինայի առանցքային արտահայտումներին հանդիպում ենք:

Նոր դարում արդարության խնդիրը տեղափոխվում է հասարակական պայմանագրի և պետական իշխանության լեգիտիմության հարթություն: Թոմաս Հոբսի «Լևիաթան» երկում արդարությունը կապված է պայմանագրերի կատարումի և խաղաղության ապահովման հետ (Hobbes, 1996, Part I, Ch. 15): Մարդկանց միջև կնքված պայմանագրերը և դրանց պահպանման նկատմամբ սուվերեն իշխանության վերահսկողությունն են այն հիմքը, որի վրա խարսխվում է հասարակական կարգը:

Ջոն Լոկի համար արդարությունն առաջին հերթին բնական իրավունքների պաշտպանությունն է՝ կյանքի, ազատության և սեփականության անձեռնմխելիության տեսքով (Locke, 1988, Second Treatise, chs. 2–3, 9): Պետությունն արդար է այնքանով, որքանով այն ապահովում է այս իրավունքների համընդհանուր և անաչառ պաշտպանությունը՝ անկախ անձանց սոցիալական կամ քաղաքական դիրքից: Հենց այստեղ է, որ ի հայտ է գալիս «անկողմնակալ արբիտրի» գաղափարը, որը հետագայում կվերաձևակերպվի որպես անկախ դատարան և արդար դատաքննության ինստիտուտ (Locke, 1988, Second Treatise, ch. 7, §125):

Ժան-ժակ Ռուսոն արդարության խնդիրը տեղափոխում է նաև ժողովրդական ինքնիշխանության դաշտ: Արդար հասարակությունը նա տեսնում է այնպիսին, որտեղ «ընդհանուր կամքը» գերակայում է մասնավոր կամքի նկատմամբ, և օրենքը դառնում է ժողովրդի շահի արտահայտությունը (Rousseau, 1968):

Ժամանակակից մտածողության մեջ արդարության ընկալումը նոր շրջափուլ է մտնում Կանտի և Միլի աշխատությունների միջոցով: Կանտի իրավաբանական փիլիսոփայության մեջ արդարությունն արտահայտվում է արտաքին ազատությունների փոխադարձ սահմանափակման սկզբունքով (Kant, 1996, Doctrine of Right, Introduction, § B): Իրավունքը պայմանների այն ամբողջությունն է, որոնց դեպքում մեկի կամայական ազատությունը կարող է համատեղվել մյուսի ազատության հետ՝ ըստ ընդհանուր օրենքի:

Միլի ուտիլիտարիզմը, հակառակ Կանտի դեոնտոլոգիական մոտեցմանը, արդարությունը դիտարկում է ընդհանուր օգտի տեսանկյունից: Սակայն Միլը նաև ընդգծում է, որ արդարության բովանդակության մեջ առանձնահատուկ տեղ ունեն անհատի հիմնարար իրավունքները, որոնք չպետք է հեշտությամբ զոհաբերվեն նույնիսկ մեծամասնության օգտի համար (Mill, 1998):

Ժամանակակից արդարության տեսությունների մեջ առանցքային տեղ ունի Ջոն Ռոուլսի «Արդարության տեսությունը»: Ռոուլսի «սկզբնական դիրքի» և «անգիտության վարագույրի» մոքի փորձը հնարավորություն է տալիս պատկերացնելու այն պայմանները, որոնցում ռացիոնալ անձանցից կազմված հիպոթետիկ հավաքականը, չիմանալով իրենց իրական սոցիալական դիրքը, կընտրեր արդարության հիմնական սկզբունքները (Rawls, 1971, Part I, ch. 3):

Ռոբերտ Նոզիքը և լիբերտարիան մտածողները, հակադրվելով բաշխողական արդարության մոդելներին, առաջ են քաշում սեփականության իրա-

վունքի արդար ձեռքբերման և փոխանցման գաղափարը: Նրանց համար արդարությունը ոչ թե վերջնական բաշխման վիճակի, այլ պատմական պրոցեսի հարց է (Nozick, 1974):

«Բախտ-էգալիտարիստական» հայեցակարգերը, որոնց ներկայացուցիչներից են Ռոնալդ Դվորքին (Dworkin, 1981) ու Ջ. Ա. Կոհենը (Cohen, 1989), փորձում են ձգգրտել սոցիալական հավասարության չափանիշները՝ տարանջատելով այն, ինչ պայմանավորված է անձի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներով:

Իրավունքի տեսությունները և արդար դատաքննության հայեցակարգը

Արդար դատաքննության իրավունքի բացատրությունը հնարավոր չէ առանց իրավունքի բնույթի վերաբերյալ հիմնական տեսությունների քննարկման: Բնական իրավունքի (natural law), իրավական պոզիտիվիզմի (legal positivism) և մեկնաբանողական մոտեցման (interpretivism) միջև առկա բանավեճը ձևավորում է այն մտավոր միջավայրը, որում ձևավորվում է նաև արդար դատաքննության ժամանակակից ընկալումը:

Բնական իրավունքի ավանդույթը, որի արմատներն առանձնահատուկ հստակությամբ հայտնվում են հին հունական փիլիսոփայության և միջնադարյան քրիստոնեական աստվածաբանության մեջ, պնդում է, որ գոյություն ունեն մարդու բնույթից բխող, բանականությամբ ճանաչելի համընդհանուր բարոյական սկզբունքներ: Այս սկզբունքները ավելի բարձր կարգի են, քան պետության կողմից ընդունված ցանկացած օրենք, և դրական իրավունքը լեգիտիմ է այնքանով, որքանով չի հակասում այդ բնական սկզբունքներին (Cicero, 1928, I.18–19):

Բնական իրավունքի այս տեսանկյունից արդար դատաքննությունը դիտվում է որպես մարդու բնածին իրավունք՝ բխելով նրա արժանապատվությունից և բանականությունից: Անկողմնակալ և բաց դատավարությանը մասնակցելու, լսվելու, իր իրավունքների մասին տեղեկացված լինելու պահանջները չեն ընկալվում որպես պետության «շնորհք», այլ որպես մարդկային էության բնածին պահանջ:

Իրավական պոզիտիվիզմը, հակառակ բնական իրավունքի, շեշտում է իրավունքի և բարոյականության ոլորտների բաժանումը: Օստինից (Austin, 1832) մինչև Կելզեն (Kelsen, 1960) և Հարթ, պոզիտիվիստները պնդել են, որ իրավունքն առաջնահերթ սոցիալական փաստ է՝ կանոնների համակարգ, որը վավեր է, քանի դեռ ընդունվել է սահմանված ընթացակարգերով և ճանաչվել է համապատասխան մարմինների կողմից:

Հարթը, գիտակցելով այս վտանգը, խոսում է «նվազագույն բովանդակության բնական իրավունքի» մասին՝ ընդունելով, որ ցանկացած կենսունակ իրավական համակարգ պետք է պարունակի որոշ բովանդակային նվազագույն պահանջներ (Hart, 1994):

Մեկնաբանողական մոտեցումը, որը, հատկապես զարգացել է Ռոնալդ Դվորքինի աշխատություններում, առաջարկում է երրորդ ուղին (Dworkin, 1986): Ըստ այս մոտեցման՝ իրավունքը կազմված է ոչ միայն կանոններից, այլ նաև սկզբունքներից, որոնք արտահայտում են համայնքի քաղաքական-

բարոյական համոզմունքները:

Այս երեք մեծ ավանդույթների համադրությունը ցույց է տալիս, որ արդար դատաքննության իրավունքը միաժամանակ և՛ բնական իրավունքի արտահայտություն է, և՛ դրական իրավունքի նորմ, և՛ մեկնաբանության արդյունք:

Արդարության տեսակները և դրանց փոխհարաբերությունը իրավական արդարության հետ

Արդարության փիլիսոփայական քննարկումները հանգեցրել են դրա տարբեր տեսակների ձևակերպման, որոնք յուրաքանչյուրը սեփական շեշտադրումներն ունի և տարբեր ձևով են արտացոլվում դատավարական հարաբերություններում:

Բաշխողական արդարությունը (distributive justice) վերաբերում է այն հարցին, թե ինչպես են հասարակության ներսում բաշխվում բարիքները, ռեսուրսները, իրավունքներն ու պարտականությունները (Rawls, 1971, §§1–3): Այն կարևոր է ոչ միայն տնտեսական քաղաքականության կամ սոցիալական ապահովության դաշտում, այլև արդարադատության կազմակերպման հարցերում: Դատարանների ֆինանսավորման մակարդակը, անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը, դատավորների և դատախազների ծանրաբեռնվածությունը՝ բոլորը բաշխողական արդարության իրավաքաղաքական դրսևորումներ են:

Եթե այս ոլորտներում առկա են խորը անհավասարություններ, ապա դատավարական մակարդակում հավասարության մասին խոսելն արդեն ավելի բարդ է դառնում, նույնիսկ եթե կանոնները թվացյալ նույնն են բոլորի համար:

Ուղղիչ արդարությունը (corrective justice) կենտրոնանում է արդեն տեղի ունեցած անարդարությունների և վնասների վերականգնման վրա: Քաղաքացիական և քրեական դատավարության մեծ մասը հենց ուղղիչ արդարության ոլորտին է պատկանում: Քաղաքացիական գործերում դատական որոշումները պետք է վերականգնեն խախտված իրավունքները, պատժեն պայմանագրի խախտողին կամ հատուցեն պատճառված վնասը:

Քրեական գործերում ուղղիչ արդարությունը համադրվում է պատժի ընկալման հետ. այստեղ քննարկման առարկա է դառնում ոչ միայն ոճրագործին պատժելու անհրաժեշտությունը, այլև զոհի իրավունքների պաշտպանությունը:

Վրեժխնդրական արդարությունը (retributive justice), թեև պատմականորեն ավելի հին է, ժամանակակից իրավական համակարգերում նույնպես շարունակում է պահել իր ազդեցությունը, հատկապես հանրային կարծիքի մակարդակում: Կանտը պաշտպանում է արդարության այս տեսակի գաղափարը՝ պնդելով, որ պատիժը պետք է կիրառվի ոչ թե որպես միջոց այլ նպատակների համար, այլ որպես մեղքի արժանի արձագանք (Kant, 1996): Ֆայնբերգը փաստում է, որ պատիժը հասարակության համար ունի նաև արտահայտչական նշանակություն:

Վերականգնողական արդարությունը (restorative justice) փորձում է լրաց-

նել վրեժխնդրական և ուղղիչ արդարության սահմանափակումները՝ կենտրոնանալով ոչ միայն իրավախախտի պատժման, այլև զոհի, համայնքի և իրավախախտի միջև խզված վստահության վերականգնման վրա (United Nations Economic and Social Council, 2002):

Ընթացակարգային արդարությունն (procedural justice) այն դաշտն է, որտեղ համադրվում են բոլոր վերոնշյալ տեսակները: Այն չի սահմանափակվում միայն դատավարական կանոնների պահպանմամբ: Ընթացակարգային արդարությունը վերաբերում է ամբողջ գործընթացի արդարությանը՝ կողմերի հավասար իրավունքների պահպանումը, դատարանի անկողմնակալության երաշխավորումը, դատական լուսմների հրապարակայնությունը, դատական ակտի պատճառաբանված լինելը:

Արդարամտություն և իրավական արդարություն

Արդարամտության հայեցակարգը արդարության մասին ժամանակակից քննարկումներում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Եթե արդարությունը հաճախ ընկալվում է որպես վերջնական արդյունքի բովանդակային գնահատում, ապա արդարամտությունը ընդգծում է գործընթացի արդարությունը, անաչառությունն ու հավասար վերաբերմունքը:

Արդարամիտ ընթացակարգը այնպիսին է, որտեղ որոշումները չեն ընդունվում միակողմանիորեն կամ գաղտնի, այլ ձևավորվում են մրցակցային լսման, փաստերի բաց և հավասար ներկայացման պայմաններում: Արդարամտությունը ենթադրում է, որ դատարանը կողմերից ոչ մեկի հետ չի նույնականանում և պահպանվում է «հավասար հեռավորություն»:

Միևնույն ժամանակ արդարամտությունը չի կարող սահմանափակվել գործընթացային նեղ պահանջներով: Այն հակադրվում է բացարձակ ձևական հավասարությանը, երբ տարբեր պայմաններում գտնվող անձանց նկատմամբ կիրառվում է նույն կանոնը՝ անտեսելով նրանց փաստացի անհավասարությունը:

Իրավունքի գերակայություն և արդարություն

Իրավունքի գերակայության գաղափարը արդարության ինստիտուցիոնալ իրականացման առանցքային ձևերից է: Այն ենթադրում է, որ պետական իշխանությունը սահմանափակված է օրենքով, օրենքը գործում է ընդհանուր և հավասար կերպով, իսկ դատարաններն ունեն բավարար անկախություն՝ ապահովելու համար այդ սկզբունքների գործնական իրականացումը:

Իրավունքի գերակայությունը սովորաբար նկարագրվում է մի շարք տարրերով: Նախ, օրենքի առջև հավասարության պահանջն է, համաձայն որի՝ որևէ անձ, այդ թվում՝ բարձրագույն պետական պաշտոնյան, չի կարող լինել օրենքից վեր կամ դուրս:

Երկրորդ կարևոր տարրը օրենքների հրապարակայնությունն ու կանխատեսելիությունն է: Իրավական նորմերը պետք է լինեն նախնական կերպով հրապարակված, հասանելի և բավարար չափով հստակ:

Երրորդը պետական իշխանության սահմանափակվածությունն է: Գործադիր, օրենսդիր և դատական մարմինները կարող են գործել միայն այն լիազորությունների սահմաններում, որոնք սահմանված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Չորրորդ առանցքային տարրն անկախ և անկողմնակալ դատարանների գոյությունն է: Դատական իշխանության ինստիտուցիոնալ և անձնական անկախությունը իրավունքի գերակայության գլխավոր երաշխիքն է:

Վերջապես, իրավունքի գերակայությունը ենթադրում է արդյունավետ իրավական պաշտպանություն: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր անձ, ում իրավունքը խախտվել է, պետք է ունենա իրական հնարավորություն դիմելու դատարան:

Մարդու արժանապատվությունը՝ որպես արդար դատաքննության փիլիսոփայական հիմք

Մարդու արժանապատվության գաղափարը ժամանակակից իրավական համակարգերի հիմնասյունն է: Կանտյան փիլիսոփայությունում արժանապատվությունը բխում է այն հանգամանքից, որ մարդը ինքնավար և բանական էակ է, որն ունակ է ինքնուրույն որոշումներ կայացնել և պատասխանատվություն կրել դրանց համար (Kant, 1997, Sections II–III):

Այս սկզբունքը միջազգային և ազգային իրավական փաստաթղթերում ստանում է նորմատիվ ձևակերպումներ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (United Nations, 1948), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան (Council of Europe, 1950), բազմաթիվ սահմանադրություններ մարդու արժանապատվությունը հայտարարում են որպես բոլոր իրավունքների աղբյուր և մեկնաբանման ուղեցույց:

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է հետևյալը. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է» (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015):

Արդար դատաքննության իրավունքը հենց այն ոլորտներից է, որտեղ արժանապատվության պահանջները ամենհատակ դրսևորումն են ստանում: Դատավարության ընթացքում անձը գտնվում է հատկապես խոցելի վիճակում. նրա նկատմամբ կարող են կիրառվել ազատության սահմանափակումներ, նյութական և ոչ նյութական ծանր հետևանքներ ունեցող վճիռներ:

Արժանապատվության պահանջը, նախ և առաջ, ենթադրում է, որ դատավարության կողմը ձանաչվի որպես գործընթացի սուբյեկտ, ոչ թե օբյեկտ: Նա պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր դիրքորոշումը, հասկանալու իր դեմ ներկայացված մեղադրանքների կամ քաղաքացիական պահանջների բնույթն ու հիմքերը:

Արդար դատաքննության իրավունքի տեսական-իրավական վերլուծության կարևոր հարցերից մեկը դրա երկակի բնույթի բացահայտումն է: Սուբյեկտիվ չափման տեսանկյունից արդար դատաքննության իրավունքը ամ-

րագրված է որպես յուրաքանչյուր անձի անհատական պահանջ, որն ուղղված է պետության դեմ:

Միևնույն ժամանակ, արդար դատաքննության իրավունքը պարունակում է նաև օբյեկտիվ սկզբունքներ, որոնք վերաբերում են ողջ դատական իշխանության կազմակերպմանը: Օբյեկտիվ չափումը պարտավորեցնում է պետությանը ձևավորել այնպիսի դատական համակարգ, որը կառուցվածքային առումով ունակ է ապահովել անկախություն, անաչառություն, մասնագիտական որակ:

Արդար դատաքննությունը որպես երաշխիքների համակարգ

Արդար դատաքննության իրավունքը հաճախ բնութագրվում է որպես «երաշխիքների համակարգ»: Երաշխիքների համակարգ ասելով՝ նկատի են առնվում այն փոխկապակցված նորմատիվ, ինստիտուցիոնալ և պրակտիկ միջոցները, որոնց համադրությունը թույլ է տալիս, որ դատավարությունը վերածվի կանխատեսելի, բանական և մարդու իրավունքներին համահունչ գործընթացի:

Երաշխիքների փոխկապակցված բնույթը նշանակում է, որ որևէ մեկի վերացումը կամ էական թուլացումը կարող է խաթարել ամբողջ համակարգի հավասարակշռությունը:

Քննարկում

Հակամրցակցային և քննիչ մոդելների տեսական վերլուծություն

Արդար դատաքննության հայեցակարգի տեսական վերլուծության կարևոր բաղադրիչներից է դատավարության մոդելների՝ հակամրցակցային (adversarial) և քննիչ (inquisitorial) համակարգերի համեմատությունը:

Հակամրցակցային մոդելում դատավարությունը կառուցվում է կողմերի միջև մրցակցության տրամաբանությամբ: Յուրաքանչյուր կողմ ներկայացնում է իր տեսլականը, ապացույցները և իրավական հիմնավորումները, իսկ դատավորի դերը հիմնականում զերծ է ակտիվ հետաքննիչ գործառնություններից:

Քննիչ մոդելում կենտրոնական դեր ունի դատավորը կամ դատարանը, որը ակտիվորեն մասնակցում է փաստերի պարզաբանմանը, հարցեր է տալիս, հանձնարարում է փորձաքննություններ:

Արդար դատաքննության տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու մոդելների պարագայում էլ հնարավոր է ապահովել արդար դատավարություն, եթե պահպանվում են հիմնական երաշխիքները:

Դատական գործընթացը որպես հանրային դիսկուրս և լեգիտիմության աղբյուր

Ժամանակակից քաղաքական փիլիսոփայության մի շարք ներկայացուցիչներ, մասնավորապես այն ուղղությունները, որոնք ներշնչված են հաղորդակցական գործողության տեսություններով, դատական գործընթացը ներկայաց-

նում են որպես բանական քննարկման ինստիտուցիոնալացված հարթակ:

Դատավարության մասին հասարակության ընկալումները կախված են ոչ միայն իրական ընթացակարգերից, այլև դրանց ներկայացումից՝ հանրային հաղորդակցության մակարդակում: Հետևաբար, արդար դատաքննության հայեցակարգը պետք է ներառի նաև դատավարության հաղորդակցական և խորհրդանշական չափումները:

Արդար դատաքննության իրավունքի քննադատական և ինտեգրատիվ դիտարկումներ

Արդար դատաքննության հայեցակարգը, ինչպես և ցանկացած իրավական ինստիտուտ, ենթակա է քննադատական վերանայման: Քննադատական իրավագիտության ներկայացուցիչները ուշադրություն են հրավիրել այն հանգամանքի վրա, որ դատաբանները գործում են որոշակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համատեքստում:

Ֆեմինիստական իրավագիտությունը վերլուծել է, թե ինչպես են իրավական նորմերն ու դատական պրակտիկան երբեմն անտեսում կանանց և այլ խոցելի խմբերի փորձի առանձնահատկությունները:

Այս քննադատությունները չեն նշանակում, թե արդար դատաքննության իրավունքը պետք է մերժվի: Ավելի շուտ դրանք ցուցադրում են, որ արդար դատաքննության հայեցակարգը պետք է մշտապես բաց մնա վերախմաստավորման և զարգացումների համար:

Վրեժխնդրությունից դեպի ինստիտուցիոնալ արդարություն

Վրեժխնդրության դասական համակարգում գոհը կամ նրա ընտանիքը սեփական իրավունք էր համարում պատժել իրավախախտին: Այս համակարգը հանգեցնում էր անվերջ բռնությունների և չվերահսկվող հակամարտությունների:

Պետական ինստիտուցիոնալ արդարադատության ձևավորումը ենթադրեց, որ միայն պետությունն ունի պատժի կիրառման իրավունք: Այս անցումը ոչ միայն թուլացրեց բռնության ինքնաբերական ցիկլերը, այլ նաև հնարավորություն տվեց, որ արդարության պահանջն արտահայտվի բանական, վերահսկելի և կանխատեսելի ձևով:

Արդարադատության սխալների նվազեցում և կանխատեսելիության ապահովում

Արդար դատաքննության հայեցակարգը կառուցված է այնպես, որ նվազեցնի սխալների հավանականությունն ու դրանց հետևանքների ծանրությունը: Հակադրվող դատավարությունը, դատավորի անկողմնակալության պահանջը, վերաքննության և վերահսկողության բազմաստիճան մեխանիզմները նպաստում են սխալների նվազեցմանը:

Կանխատեսելիությունը արդար դատաքննության ևս մեկ հիմնարար

տարր է: Այն ենթադրում է, որ անձը կարող է նախօրոք պատկերացնել, թե ինչպիսի հետևանքներ կարող են ունենալ տարբեր վարքագծային ընտրությունները:

Եզրակացություն

Փիլիսոփայական և իրավական տեսությունների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ արդար դատաքննության իրավունքը չի կարող ըմբռնվել միայն որպես դրական իրավունքի հոդված կամ տեխնիկական-դատավարական կանոնների մի պարզ կուտակում: Այն արտացոլում է արդարության, արդարամտության, իրավունքի գերակայության և մարդու արժանապատվության մասին բազմադարյա բանավեճերի և պատմական փորձի սեղմված արդյունքը:

Պլատոնից և Արիստոտելից սկսած՝ արդարության գաղափարը կապվել է պետության կառուցվածքի ներդաշնակության, համաչափության և հասարակական բարիքի հետ: Միջնադարյան բնական իրավունքի ավանդույթը ընդգծել է, որ օրենքը չի կարող արդար համարվել, եթե հակասում է բարձրագույն բարոյական սկզբունքներին: Հասարակական պայմանագրի տեսությունները արդարության խնդիրը տեղափոխել են պետական իշխանության լեգիտիմության դաշտ:

Իրավունքի տեսությունների բախումները բացահայտում են, որ արդար դատաքննության իրավունքին համարժեք կերպով մոտենալու համար անհրաժեշտ է միաժամանակ հաշվի առնել և՛ մարդու բնածին արժանապատվությունը, և՛ իրավական որոշակիության ու կանխատեսելիության պահանջները, և՛ իրավունքի մեկնաբանության ժամանակ կիրառվող արժեքային չափանիշները:

Մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես միավորող առանցք. այն պահանջում է, որ դատավարության յուրաքանչյուր փուլում անձը դիտվի որպես ակտիվ սուբյեկտ: Վրեժխնդրական արդարությունից դեպի ինստիտուցիոնալ արդարադատություն անցումը, իրավունքի գերակայության ձևավորումը, իրավական սխալների նվազեցման և կանխատեսելիության ապահովման ինստիտուտների զարգացումը ցույց են տալիս, որ արդար դատաքննության իրավունքը ոչ միայն իրավական, այլև քաղաքականության ձեռքբերում է:

Քննադատական ուղղությունները չեն ոչնչացնում արդար դատաքննության հայեցակարգը, այլ ընդլայնում են այն՝ ստիպելով հաշվի առնել սոցիալական իրականության ավելի նուրբ շերտերը: Արդյունքում ձևավորվում է ինտեգրատիվ հասկացում, որը միավորում է իրավական, փիլիսոփայական և սոցիոլոգիական մոտեցումները:

Այսպիսով, արդար դատաքննության իրավունքը պետք է ընկալել որպես բազմաշերտ, դինամիկ և միաժամանակ միասնական կատեգորիա, որի ամբողջական ըմբռնումը հնարավոր է միայն արդարության, արդարամտության, իրավունքի գերակայության և մարդու արժանապատվության փոխկապակցված վերլուծության հիմքով:

Օգտագործված գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 1995թ. հուլիսի 5-ին (2015թ. դեկտեմբերի 6-ի և 2020թ. հունիսի 22-ի փոփոխություններով)
- Aristotle, (1999). *Nicomachean ethics* (T. Irwin, Trans.). Hackett Publishing.
- Aquinas, T. (1947). *Summa Theologiae* (Fathers of the English Dominican Province, Trans.). Benziger.
- Austin, J. (1832). *The province of jurisprudence determined*. John Murray.
- Cicero, (1928). *On the laws* (De legibus) (C. W. Keyes, Trans.). Harvard University Press.
- Cohen, G. A. (1989). On the currency of egalitarian justice. *Ethics*, 99(4), էջ 906–944:
- Council of Europe, (1950). *Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms* (ETS No. 005). <https://www.echr.coe.int/>
- Dworkin, R. (1981). What is equality? Part 2: Equality of resources. *Philosophy & Public Affairs*, 10(3), էջ 283–345:
- Dworkin, R. (1986). *Law's empire*. Harvard University Press.
- Hart, H. L. A. (1994). *The concept of law* (2nd ed.). Oxford University Press.
- Hobbes, T. (1996). *Leviathan* (R. Tuck, Ed.). Cambridge University Press. (Original work published 1651)
- Justinian, (1985). *The Digest of Justinian* (A. Watson, Trans.). University of Pennsylvania Press.
- Kant, I. (1996). *The metaphysics of morals* (M. Gregor, Trans.). Cambridge University Press. (Original work published 1797).
- Kant, I. (1997). *Groundwork of the metaphysics of morals* (M. Gregor, Trans.). Cambridge University Press. (Original work published 1785)
- Kelsen, H. (1960). *Pure theory of law* (M. Knight, Trans.). University of California Press.
- Locke, J. (1988). *Two treatises of government* (Էջ Laslett, Ed.). Cambridge University Press. (Original work published 1689)
- McBrien, R. էջ (1994). *Catholicism* (New ed.). HarperCollins Publishers.
- Mill, J. S. (1998). *Utilitarianism* (R. Crisp, Ed.). Oxford University Press. (Original work published 1861)
- Nozick, R. (1974). *Anarchy, state, and utopia*. Basic Books.
- Plato. (1992). *Republic* (G. M. A. Grube, Trans.; C. D. C. Reeve, Rev.). Hackett Publishing.
- Pope, S. J. (Ed.). (2002). *The ethics of Aquinas*. Georgetown University Press.
- Rawls, J. (1971). *A theory of justice*. Harvard University Press.
- Rousseau, J.-J. (1968). *The social contract* (M. Cranston, Trans.). Penguin Books. (Original work published 1762)
- United Nations, (1948). *Universal Declaration of Human Rights*. <https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights>
- United Nations Economic and Social Council, (2002). *Basic principles on the use of restorative justice programmes in criminal matters* (ECOSOC Resolution 2002/12).

Анаит Абрамян*Соискатель кафедры права, политологии и международных отношений**Международного университета Евразия**Эл. адрес: anahit.abrahamyan2023@gmail.com*

КОНЦЕПЦИЯ ПРАВА НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО: ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

В статье представлен всесторонний теоретико-правовой анализ права на справедливое судебное разбирательство, отличающийся многогранным методологическим подходом, сочетающим философский, юридический и конституционно-правовой методы анализа.

Работа начинается с глубокого исследования справедливости как философской категории, прослеживая путь от классической греческой мысли (Платон, Аристотель) до современных теорий (Роулз, Дворкин, Нозик). Автор выделяет и анализирует различные виды справедливости — распределительную, корректирующую, воздающую, восстановительную и процессуальную, показывая их взаимосвязь с правосудием.

Особое внимание уделяется соотношению справедливости и правовой справедливости, принципу верховенства права и человеческому достоинству как философской основе справедливого судебного разбирательства. Исследуются основные теории права — естественное право, правовой позитивизм и интерпретативный подход — и их влияние на формирование концепции справедливого судебного разбирательства.

В статье обосновывается двойственная природа права на справедливое судебное разбирательство как субъективного права и объективного конституционного предписания. Анализируются состязательная и следственная процессуальные модели, роль судебного процесса как публичного дискурса и источника государственной легитимности.

Посредством критического и интегративного рассмотрения показывается, что право на справедливое судебное разбирательство не ограничивается процессуальными техническими правилами, а отражает синтез многовековой философской и правовой мысли о справедливости, верховенстве права и человеческом достоинстве.

Новизна исследования заключается в всестороннем анализе концепции справедливого судебного разбирательства как результата исторического развития правовой философии.

Ключевые слова: Справедливое судебное разбирательство, справедливость, беспристрастность, верховенство права, теория права, права человека, философия, независимость судебной власти.

Anahit Abrahamyan

*Ph.D. Student of the Law, Political Science and International
Relations Department at Eurasia International University*

Email: anahit.abrahamyan2023@gmail.com

THE CONCEPT OF THE RIGHT TO A FAIR TRIAL: A THEORETICAL–LEGAL ANALYSIS

The article presents a comprehensive theoretical–legal analysis of the right to a fair trial, distinguished by its multifaceted methodological approach that combines philosophical, jurisprudential, and constitutional–legal methods of analysis.

The work begins with an in–depth examination of justice as a philosophical category, tracing it from classical Greek thought (Plato, Aristotle) to contemporary theories (Rawls, Dworkin, Nozick). The author distinguishes and analyzes different types of justice—distributive, corrective, retributive, restorative, and procedural—demonstrating their interconnection with legal justice.

Special attention is paid to the relationship between equity and legal justice, the principle of the rule of law, and human dignity as the philosophical foundation of a fair trial. The fundamental theories of law are examined—natural law, legal positivism, and the interpretive approach—and their influence on the formation of the concept of a fair trial.

The article substantiates the dual nature of the right to a fair trial as both a subjective right and an objective constitutional mandate. The adversarial and inquisitorial procedural models are analyzed, along with the role of the judicial process as public discourse and a source of state legitimacy.

Through critical and integrative considerations, it is demonstrated that the right to a fair trial is not limited to procedural technical rules, but rather reflects a synthesis of centuries–old philosophical and legal thought on justice, the rule of law, and human dignity.

The novelty of the study lies in its comprehensive analysis of the concept of a fair trial as a product of the historical development of legal philosophy.

Key words: Fair trial, justice, fairness, rule of law, legal theory, human rights, philosophy, judicial independence.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. նոյեմբերի 25–ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. դեկտեմբերի 3–ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19–ին: